


# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԴԱՍ 2.8 Երկրագնդի տարեկան պտույտը

### Գիտե՞ս որ...

*Ճիշտ է բացատրել Լուսնի փուլերի առաջացումը, Արեգակի և Լուսնի խավարումները, մակընթացային երևույթները:*

*Նա ընդունում էր Երկրի գնդաձևությունը, երկրակենտրոն համակարգի կողմնակից էր, որով էլ բացատրում էր պարզվա եղանակների, գիշերվա ու ցերեկվա առաջացումը: Որոշ համեմատությունների ու դատողությունների միջոցով եզրակացնում էր, որ Արեգակը մեծ է թե՛ Լուսնից, թե՛ Երկրից և գտնվում է շատ մեծ հեռավորության վրա: Ստեղծել է բազմաթիվ քարտեզներ, ինչպես նաև կատարելագործել է Պտղոմեոսի քարտեզները:*

*Նա ոչ միայն ընդհանրացրել ու զարգացրել է նախորդ հայ և այլազգի գիտնականների ու մատենագիրների աշխատությունները, այլև մշակել է փիլիսոփայության սեփական համակարգը, գրել է աշխարհագրության, թվաբանության դասագրքեր, աստղագիտական աշխատություններում քննության է առել Արեգակի, Երկրի, Լուսնի, աստղերի և Տիեզերքում տեղի ունեցող երևույթների հետ կապված հարցերը: Կարծում էր, որ Ծիր կաթինը (Հարդագողի ճանապարհ) թույլ պայծառության աստղերի բազմություն է, Լուսինը՝սեփական լույսից զուրկ պինդ մարմին է և երևում է Արեգակի լույսի անդրադարձմամբ:*